ԵԱՀԿ մոդել համաժողով 2011

ԵԱՀԿ մոդել համաժողովը տեղի կունենա Երևանում՝ 2011թ. նոյեմբերի 18-19 -ին:

- 56 հաջողակ դիմորդներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնելու է մեկ ԵԱՀԿ մասնակից պետություն, կընտրվեն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից՝ համաժողովին մասնակցելու համար:
- Ընտրված դիմորդները կմասնակցեն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից կազմակերպված մի շարք դասախոսությունների և նախապատրաստական գործնական դասընթացների՝ ԵԱՀԿ-ի գործունեության, դիվանագիտական հմտությունների և հրապարակային խոսքի թեմաներով:
- Համաժողովի բոլոր մասնակիցները որպես պարգևատրում կստանան ԵԱՀԿ մոդելի մասնակցության վկայագիր: Լավագույն մասնակիցները կստանան նաև խրախուսական մրցանակներ:
- Մասնակիցներին սպասում է նաև հետաքրքիր մշակութային երեկո:

Մասնակցության համար

- Պետք է լինել 18-25 տարեկան երիտասարդ,
- Ցանկալի է ունենալ ԵԱՀԿ մոդել համաժողովի փորձ

Եթե Ձեր տվյալները համապատասխանում են, ապա՝

- Ձեռք բերեք դիմումածևերը ԵԱՀԿ երևանյան գրասենյակում կամ ԵԱՀԿ կայքէջում www.osce.org/yerevan

Ներկայացրեք Ձեր դիմումները ԵԱՀԿ երևանյան գրասենյակ կամ ուղարկեք էլեկտրոնային տարբերակով մինչև 2011թ. սեպտեմբերի 23-ը:

- Նախընտրական փուլն անցած թեկնածուները հեռախոսով հարցազրույց կանցնեն՝ միջոցառմանը մասնակցելու համար:

model osce

Նոյեմբերի 18-19, 2011թ.

Երևան, Հայաստան

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) մասին

- ԵԱՀԿ-ն ամենաընդգրկուն տարածաշրջանային անվտանգության կազմակերպությունն է աշխարհում, որի 56 մասնակից պետությունների աշխարհագրական տարածքը ձգվում է Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ:

- Այն ունի 17 առաքելություններ հարավ-արևելյան Եվրոպայում, արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում:

- Կազմակերպության գործունեությունը ներառում է իր տարածաշրջանում վաղ ազդարարումը, հակամարտությունների կանխարգելումը, ճգնաժամերի կառավարումը և հետկոնֆլիկտային վերականգնումը:

- Կազմակերպության ռազմաքաղաքական, տնտեսական ու բնապահպանական և մարդու իրավունքների անվտանգության երեք ոլորտները զբաղվում են համապարփակ անվտանգության մի շարք խնդիրներով: Դրանք ներառում են սպառազինությունների վերահսկողություն, մարդկանց և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն, ժողովրդավարացում, ոստիկանության արդյունավետ ռազմավարություն, ահաբեկչության դեմ պայքար և տնտեսական և բնապահպանական գործունեություն:

- Բոլոր 56 մասնակից պետություններն ունեն հավասար կարգավիճակ և որոշումներն ընդունվում են կոնսենսուսի միջոցով քաղաքական, բայց ոչ իրավական պարտադրվածության հիմքերով:

ԵԱՀԿ մոդել համաժողով Հայաստանում

- ԵԱՀԿ մոդել համաժողովը ձգտում է ներգրավել նոր սերնդին, որը ԵԱՀԿ տարածաշրջանի ապագան է:

- Ձեր մասնակցությունը, Ձեր հետաքրքրությունը և Ձեր պատրաստակամությունը մասնակցել անվտանգության մարտահրավերներին, որոնց մենք այսօր դեմ ենք առնում, թարմ ուժ կտա տարածաշրջանում անվտանգ ապագա կառուցելու մեր ջանքերին:

- Հայաստանում երիտասարդները ոչ բավարար չափով են ներկայացված որոշումների և քաղաքականության մշակման մակարդակներում: Որպես մեր երկրի ապագա առաջնորդներ՝ նրանց պետք է հնարավորություն տալ մասնակցել այսօրվա քաղաքացիական կյանքին:

- Հայաստանում ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ է ստեղծել մի միջավայր, որտեղ առաջնորդների և ակտիվիստների նոր սերունդը կարող է մասնակցել ազատ քննարկումներին:

- Մամուլի և հանրային տեղեկատվության բաժնի հետ համատեղ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի երիտասարդական ծրագիրը աջակցում է երիտասարդների մասնակցությանը ժողովրդավարական գործընթացներին: ԵԱՀԿ մոդելի համաժողովները հարստացնում են երիտասարդների գիտելիքները ժողովրդավարական որոշումների ընդունման և ԵԱՀԿ-ի՝ որպես անվտանգության բազմակողմանի գործչի մասին:

Մեր կոնտակտները

ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

Սունդուկյան 64/1
Հեռ. 010 229610/11/12/13/14,

Մելինե Նահապետյան
Ժողովրդավարացման բաժնի
Երիտասարդական ծրա•ների
համակարգող
ներք. 5462
Meline.Nahapetvan@osce.org

Գոհար Ավագյան
Մամուլի և հանրային
տեղեկատվության
պատասխանատու
ներք. 5406
Gohar.Avaqvan@osce.org

www.osce.org/yerevan

ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ